հայութիւնը իր ինքնավար դպրոցների պահպանութեան համար ծախսելիս է եղել տարեկան գրեթէ մէկ միլիոն ռուբլի: Եւ մի՛ մոռնաք, որ ինչպէս դպրոցների թիւը, այնպէս նաեւ նրանց եկեմուտքը տարուէ տարի զգալապէս մեծանում էր:

Նոյն 1914 թուականին ռուս-պետական ժողովրդական դպրոցներում սովորող հայ աշակերտութեան թիւը աւելի եւս մեծ է եղել — 43,594, իսկ միջնակարգներում՝ հինգ անգամ աւելի, քան հայ-ազգային միջնակարգ վարժարաններում: Եւ ռուսական այդ դպրոցները հանդիսանում էին մի-մի ճուլարան՝ լուծելտարրալուծելու համար հայ (եւ տեղացի միւս) տարրը: Եւ սակայն ազգային գիտակցութիւնը այնչափ զօրեղացել էր Ռուսիոյ ժողովուրդների մէջ դեռ ցարիզմի օրով, որ վերջինիս Պետական Դուման հարկադրուած եղաւ՝ առաջին հերթին դէթ տարրական դպրոցի առաջին տարիների ուսմունքը ազգայնացնելու մասին օրէնք քուէարկել:

Փետրուարեան յեղափոխութեան հետեւանքով Կովկասի ռուս-պետական դպրոցները ազգայնացուեցան, տարրականները միանգամից, միջնակարգները՝ աստիճանաբար, շարունակելով հանդերձ պահպանուիլ պետական միջոցներով: Այդ ընթացքը զարգացաւ եւ իր տրամաբանական վախճանին հասաւ՝ անկախ հանրապետութեանց ստեղծումով:

Այսչափը՝ դպրոցների մասին: Բայց չէ՞ որ, գիտենք, մշակութային ինքնավարութիւն ասելով հասկանում ենք նաեւ ազգային գրականութեան, արուեստի, թատրոնի, գիտութեանց մշակումն եւ պահպանութիւն՝ սեփական ուժերով, բայց պետական միջոցներով: Արդ, կարելի՞ է ասել, թէ, օրինակ, Վրաստանի եւ Ատրբէյջանի հայութիւնը, իր թուական համեմատութեամբ, պետականօրէն օժտուած է՝ հոգալու իր այդ կարգի պէտքերը: Թիֆլիսում, օրինակ, հայ եւ վրացի տարրերը թուով մօտաւորապէս իրար հաւասա՛ր են: Արդ, իրար էլ հաւասա՞ր են հայկական եւ վրացական դպրոցները այդ քաղաքում: Հաւասա՞ր չափով են հայերէն եւ վրացերէն ներկայացումներ տալիս Թիֆլիսի թատրոններում, որոնց կառուցման մէջ հայերը յամենայն դէպս անհամեմատ աւելի բաժին ունին, քան՝ վրացիք: Ցատկապէս Թիֆլիսի — ոչ ամբողջ Վրաստանի — գիտական եւ ուրիշ կարգի մշակութային կարիքների համար յատկացուած գումարներից հաւասա՞ր չափով են օգտուում քաղաքի հայ եւ վրացի տարրերը: Հարկաւ ո՛չ: Չէ՞ որ Վրաստանի համայնավար կուսակցութեան պետը, Կախիանին ինքն էր, որ դեռ վերջերս հարկադրուեցաւ խոստովանիլ, թէ, օրինակ, Ախալքալաքի հայութեան մշակութային եւ տնտեսական կարիքների համար անհամեմատ աւելի քիչ միջոցներ են տրամադրուում, քան՝ որեւէ ուրիշ դաւառի: Գիտէ՞ք ինչու. որովհետեւ... Ախալքալաքի բնակչութիւնը շարունակական դիմումներով չէ խանգարում «բարեխնամ կառավարութեան» հանգիստը:

Ո՞ւր է մնում հապա մշակութային ինքնավարութիւնը Խորհրդային դրախտում: Ինքնավարութիւնը մէկ կողմը: Թիֆլիսի հայ բանուորը նոյն քաղաքի վրացի բանուորի չափ քաղաքացիական-մարդկային իրաւունքներ վայելո՞ւմ է: Ո՛չ:

Քուէի իրաւունք ունեցող Խորհրդային քաղաքացիների թիւը Թիֆլիսի հայերի մէջ պակաս չէ, քան վրացիների. այդ յայտնի է: Իսկ ի՞նչ համեմատութեամբ են ներկայացուած այնտեղ հայ եւ վրացի իրաւահաւասա՞ր քուէարկողները:

Ոչ այլ ոք քան «նոյն ինքն» Օրժոնիկիձէն էր, որ մի քանի տարի առաջ թուական տուեալներով հրապարակ հանեց — հարկաւ ակամայից — երկինք աղաղակող խտրականութիւնը՝ մի կողմից վրացի, միւս կողմից հայ եւ ուրիշ ազգի «քաղաքացիների» իրաւանց մէջ: Եւ Օրժոնիկիձէն դրանով ուզում էր մի փոքր նստեցնել իր «աջակողմեան» — որպէս թէ ինքը ձախակողմեա՞ն է — համայնավար վրացի ընկերների ազգայնական փուքը, թէ՝ տեսէ՛ք, ստեղծուած (սեփական ձեռքերով) պայմաններում ո՞րչափ արտօնեալ վիճակ ունին Թիֆլիսի վրացիք, հանդէպ միւսների, էլ ինչի՞ են դեռ դժգոհում: Ինչո՞ւ չէ, աւելին համայնավարների փորն էլ չի ծակել:

Ի՞նչ էին ասում Օրժոնիկիձէի թուերը (1926 թ. համար).—